

ԱՐԴԻ ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆԻ ՇԵՇՏԱՓՈԽԱԿԱՆ ՁԱՅՆԱՎՈՐԱՅԻՆ
ՀԵՐԹԱԳԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(համաժամանակյա և տարաժամանակյա քննություն)

Բանալի բառեր – շեշտափոխական ձայնավորային հերթագայություններ, ձևահնչույթային հերթագայություններ, համաբանական համահարթեցման գործընթաց, զուգաձևության ինտենսիվ փուլ, հնչյունափոխված և անհնչյունափոխ տարբերակներ

Հայտնի է, որ համաբանությունը մարդկային մտածողության հիմնական տիպերից մեկն է, որն ընկած է կարգադասման (categorization) ճանաչողական գործընթացի հիմքում¹: Իսկ համաբանական-ձևաբանական փոփոխությունները լեզվական երևույթների մտածական արտացոլումների կարգադասման մեջ կատարվող տեղաշարժեր են²: Ընդ որում՝ հին ձևի համաբանական փոխարինումը նորով սովորաբար անցնում է զուգաձևության միջակա փուլ³: Առանձնացվում է համաբանական-ձևաբանական փոփոխության երկու հիմնական տիպ՝ համահարթեցում և ընդլայնում: Առաջինի դեպքում հարացույցի ձևահնչույթային հերթագայությունը վերանում է, իսկ երկրորդի ժամանակ տվյալ քերականական օրինաչափությունը տարածվում է սկզբնապես այլ օրինաչափությունների պատկանող ձևերի վրա⁴:

Անշուշտ ձևահնչույթային հերթագայությունները որոշակիորեն մթագնում են ձևային ձևաբանական նույնականությունը, ուստի համահարթեցման միտումը ձգտում է վերականգնել ձևային միասնականությունը և դրանով իսկ ավելի անմիջական փոխհարաբերություն հաստատել իմաստի և ձևի միջև⁵: Արդ, ձևահնչույթային հերթագայությունները, որոնք սովորաբար առաջանում են սկզբնական զուտ հնչյունական պայմանավորվածություն ունեցող հերթագայությունների հետագա քերականացմամբ ու բառայնացմամբ⁶, ընդհանուր առմամբ համաբանական համահարթեցման միտում

¹ Տե՛ս **Bybee J., Beckner C.**, Language use, cognitive processes and linguistic change // **Bowern C., Evans B.** (eds.), The Routledge Handbook of Historical Linguistics, London and New York, 2015, p. 505-507:

² Տե՛ս նույն տեղում, էջ 506-507:

³ Տե՛ս **Bybee J.**, Diachronic linguistics // **Geeraerts D. and Cuyckens H.** (eds.), The Oxford Handbook of Cognitive Linguistics, Oxford University Press, 2007, Ch. 36, p. 958-959, նաև՝ **Ջահուկյան Գ.**, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Երևան, 1969, էջ 207:

⁴ Տե՛ս **Bybee J.**, Diachronic linguistics, p. 958-964:

⁵ Տե՛ս **Hans Hock H.**, Principles of Historical Linguistics, 2nd ed., Berlin/New York, 1991, p. 235-237:

⁶ Տե՛ս **Bybee J.**, Phonology and Language Use, Cambridge University Press, 2004 [2001], p. 96-109, 214-215, *նույնի* Formal universals as emergent phenomena: the origins of structure preservation //

են ցուցաբերում¹: Ընդ որում՝ որքան ավելի սերտ է իմաստային կապը լեզվական ձևերի միջև, այնքան ավելի մեծ է համաբանական համահարթեցման հավանականությունը²: Ուստի համահարթեցումը սովորաբար ավելի հաճախ և ավելի մեծ չափով տեղի է ունենում ձևաբանական հարացույցի ներսում, քան բառակազմական մակարդակում՝ պարզ և բաղադրական հիմքերի միջև. հմմտ. ժ. հայ. եզ. ուղղ. լույս, եզ. սեռ. լույս-ի, եզ. բաց. լույս-ից, հոգ. ուղղ. լույս-եր (որտեղ ույ/ու հերթագայությունը վերացել է՝ ույ-ով ձևահնչությային տարբերակի ընդհանրացմամբ), մյուս կողմից՝ ժ. հայ. լույս – լուսավոր (որտեղ նույն հերթագայությունը դեռ պահպանվում է): Իհարկե տարբեր քերականական ձևերի միջև նույնպես իմաստային մերձավորության աստիճանը կարող է տարբեր լինել՝ կախված այն բանից, թե տվյալ քերականական կարգը որքան էականորեն է ազդում նշանակյալի բուն իմաստի վրա և ի՞նչ չափով է փոփոխում այն: Օրինակ, թվի կարգը համեմատաբար ավելի մեծ իմաստային փոփոխություն է առաջացնում նշանակյալի մեջ, քան հոլովի կարգը³: Այդուհանդերձ, ինչպես կարելի է տեսնել հայ. լույս բառի վերը բերված ձևերից, թվի և հոլովի քերականական ձևերի իմաստային մերձավորության աստիճանի տարբերությունը էական դեր չի խաղում հայերենի շեշտափոխական ձայնավորային հերթագայությունների համահարթեցման գործընթացում: Դա ակնհայտ է հատկապես բարբառների տվյալներից, որտեղ թե՛ ձայնավորների շեշտափոխական թուլացումը/սղումը և թե՛ այդ ձևահնչությային հերթագայությունների համաբանական համահարթեցումը հոլովման և հոգնակիի ձևերում կատարվում են գրեթե նույն կանոններով (տե՛ս ստորև):

Նշենք նաև, որ դիագրամային պատկերագրայնության (diagrammatic iconicity) միտումը փորձում է որոշակի կառուցվածքային համապատասխանություն հաստատել իմաստի և ձևի միջև: Արդ, որքան մեծ (էական) է լեզվական ձևերի միջև իմաստային հակադրությունը, այնքան սովորաբար մեծ է լինում նրանց ձևային-ձևաբանական տարբերությունը և հակառակը: Ուստի ձևահնչությային հերթագայությունները լեզուներում սովորաբար ավելի հաճախադեպ են համեմատաբար էական իմաստային հակադրությունների պարագայում⁴: Անշուշտ դա էլ իր հերթին մեծապես պայմանավորված է այն բանով, որ համաբանական համահարթեցումը ավելի հաճախ տեղի է ունենում համեմատաբար սերտ իմաստային փոխհարաբերության մեջ գտնվող և, ըստ այդմ, ոչ այնքան էական իմաստային հակադրություն արտահայտող ձևերի միջև⁵:

Good J. (ed.), Linguistic Universals and Language Change, Oxford University Press, 2008, p. 108-121:

¹ Տե՛ս Hans Hock H., նշվ. աշխ., էջ 168-169:

² Տե՛ս Bybee J., Morphology: A Study of the Relation Between Meaning and Form, Amsterdam/Philadelphia, 1985, p. 64-65:

³ Հանգամանորեն տե՛ս նույն տեղում, էջ 33-41, նաև՝ էջ 58-65:

⁴ Տե՛ս Bybee J., Frequency of Use and the Organization of Language, Oxford, 2007, Ch. 3, p. 41-44:

⁵ Տե՛ս Bybee J., Morphology..., p. 64-65:

Հայտնի է նաև, որ կիրառահաճախականությունը (the frequency of use) լեզվակառուցվածքի համաժամանակյա օրինաչափությունների և տարածամանակյա փոփոխությունների բնույթն ու ուղղվածությունը պայմանավորող չափազանց կարևոր գործոն է¹: Համաբանական-ձևաբանական փոփոխությունների դեպքում բարձր կիրառահաճախականությունը գորեղացնում է լեզվական ձևերի հիշողական մտապատկերները՝ դրանք դարձնելով դժվարփոփոխելի: Ուստի ձևաբանական և ձևահնչույթային *անկանոնությունները* (որոնք մասամբ նախկին ընդհանրական օրինաչափությունների մնացորդներ են, մասամբ էլ զանազան ոչ ընդհանրական հնչյունափոխությունների արդյունք²) հաճախագործաձևական ձևերում պահպանվում են ավելի երկար վերջիններիս հիշողական մտապատկերների գորեղության շնորհիվ: Մինչդեռ սակավագործաձևական ձևերի փոխարեն հեշտությամբ համաբանական նոր ձևեր են կազմվում ավելի կենսունակ օրինաչափությունների հետևողությամբ: Ընդ որում՝ հարացույցի առավել գործաձևական ձևը հանդես է գալիս որպես հիմնաձև, և համաբանական համահարթեցումը սովորաբար տեղի է ունենում վերջինիս հենքի վրա: Այդ առումով հայտնի է, որ. **ա)** եզակի թվի ձևը ավելի գործաձևական է, քան հոգնակին, **բ)** ուղիղ հոլովաձևերը ավելի գործաձևական են, քան թեք հոլովաձևերը և այլն: Մյուս կողմից՝ լեզվական ձևերի բարձր կիրառահաճախականությունը արտաբերականորեն պայմանավորված հնչյունափոխությունների ժամանակ ճիշտ հակառակ՝ թուլացուցիչ հետևանքային ազդեցություն է ունենում, և ընթացիկ հնչյունափոխությունները ավելի վաղ և ավելի մեծ չափով տեղի են ունենում առավել գործաձևական ձևերում³:

Այս ընդհանուր լեզվաբանական դրույթները ներկայացնելուց հետո այժմ փորձենք ասվածի լույսի ներքո դիտարկել արդի գրական արևելահայերենի շեշտափոխական ձայնավորային հերթագայությունները, որոնք առավելապես հայտնի են *շեշտափոխական հնչյունափոխություններ* անվամբ: Վերջիններիս բնույթի և գործառական առանձնահատկությունների վերաբերյալ հայ լեզվաբանական-քերականական գրականության մեջ առկա է երկու հիմնական տեսակետ: Դրանցից առաջինի համաձայն՝ հին հայերենից (մասամբ էլ բարբառներից) ժառանգված շեշտափոխական հնչյունափոխությունները արդի գրական լեզվում այլևս գործուն օրինաչափություններ չեն, այլ ավանդական բնույթ են կրում, ուստի չեն տարածվում նոր և նորագույն փոխառությունների վրա. հմմտ. *այլումին, թենիս, արխիվ, գրիպ, ավտոբուս*,

¹ Տե՛ս **Ավետյան Ս.**, Արդի հայերենի ընթացիկ փոփոխություններից մեկը կիրառահեն լեզվաբանության լույսի ներքո // «ԲԵՇ. Բանասիրություն», 2019, թիվ 2, էջ 48-56, *նույնի՝* Նշույթավորվածության և կիրառահաճախականության փոխհարաբերության ըմբռնումը արդի լեզվաբանության մեջ // «Լեզու և լեզվաբանություն», 2019, թիվ 1, էջ 38-48:

² Տե՛ս **Haspelmath M., Sims A. D.**, Understanding Morphology, 2nd ed., Hodder Education, An Hachette UK Company, 2010, p. 275-276:

³ Հանգամանորեն տե՛ս **Ավետյան Ս.**, Արդի հայերենի ընթացիկ..., էջ 48-56:

մոլեկուլ, վիրուս բառերի այլումինի, թենիսի, արխիվի, գրիպի, ավտոբուսի, մոլեկուլի, վիրուսի, արխիվային, գրիպային, մոլեկուլային և նման ձևերը¹: Մինչդեռ երկրորդ տեսակետի կողմնակիցները գտնում են, որ «հայ նոր գրական լեզուն ևս ունի իր շեշտափոխական հնչյունափոխությունները, որոնք կենդանի են ու գործուն և հիմնականում էլ բխում են նրա գործող օրինաչափություններից»² կամ մեկ այլ ձևակերպմամբ՝ «Ժամանակակից հայերենում գործուն և կենսունակ է հիմնականում դիրքային կամ շեշտից կախված հնչյունափոխությունը»³: Սակայն նկատենք, որ ժամանակակից գրական արևելահայերենում շեշտափոխական հնչյունափոխությունների կենդանի և գործուն լինելու օգտին սովորաբար բավարար և համոզիչ փաստարկներ չեն բերվում: Այսպես, ըստ Ա. Մարգարյանի՝ ճիշտ չի կարելի համարել այն կարծիքը, թե իբր շեշտափոխական հնչյունափոխությունները կենդանի ու գործուն չեն, և իբր դրանք մնում են գործածության սովորությամբ, այլ ոչ թե բխում մեր լեզվի գործող օրինաչափություններից, քանի որ այդ հնչյունափոխական իրողությունները «ոչ միայն գրաբարի, այլև հենց փոփոխվող ու զարգացող կենդանի լեզվի միջոցով են անցել հայ նոր գրական լեզվին»⁴:

Բայց կարծում ենք՝ այն հանգամանքը, որ շեշտափոխական հնչյունափոխությունները գրական արևելահայերենին են անցել ոչ միայն գրաբարից կատարված գրական փոխառությունների, այլև փոփոխվող ու զարգացող կենդանի լեզվի միջոցով, ինքնին չի կարող բավարար ապացույց համարվել արդի գրական լեզվում այդ հնչյունափոխությունների կենդանի և գործուն լինելու մասին: Դեռ ավելին. հենց միայն այն փաստը, որ դրանք այլևս չեն տարածվում նորագույն փոխառությունների վրա, անառարկելիորեն ցույց է տալիս, որ այդ հնչյունափոխությունները գրական արևելահայերենում արդեն գործուն օրինաչափություններ չեն, այլ ավանդական բնույթ են կրում⁵: Բնականաբար գործուն հնչյունափոխությունների մասին խոսք լինել չի կարող նաև այն դեպքերում, երբ տվյալ հնչյունափոխական օրինաչափությունը (ձևահնչույթային հերթագայությունը) հնից ժառանգած արմատական կամ ածանցական բաղադրիչները պատրաստի ձևով համաբանությամբ կիրառվում են նորակազմությունների մեջ. հմմտ. մի կողմից *գիր* - *գրապահարան*,

¹ Տե՛ս **Մուրադյան Հ.**, Հայոց լեզվի պատմական քերականություն, հ. 1, Հնչյունաբանություն, Երևան, 1982, էջ 83, նաև՝ էջ 72-84, հմմտ. նաև՝ **Սևակ Գ.**, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Երևան, 2009, էջ 86, **Առաքելյան Վ.**, **Խաչատրյան Ա.**, **Էլոյան Ս.**, Ժամանակակից հայոց լեզու, հ. 1, Հնչյունաբանություն և բառագիտություն, Երևան, 1979, 129:

² **Մարգարյան Ա.**, Ժամանակակից հայոց լեզու. Հնչյունաբանություն, Երևան, 1997, էջ 89:

³ **Մուքիսայան Ա.**, Ժամանակակից հայոց լեզու, 4-րդ հրատ., Երևան, 2004, էջ 49:

⁴ **Մարգարյան Ա.**, նշվ. աշխ., էջ 89:

⁵ Ի դեպ, օտար լեզուներից փոխառյալ բառերը չափազանց կարևոր դեր են խաղում առհասարակ հնչյունափոխությունների ժամանակագրությունը պարզելու հարցում (տե՛ս **Աղայան Է.**, Մեղրու բարբառ, Երևան, 1954, էջ 56-57, **Ավետյան Ս.**, Լեզուների համեմատական ուսումնասիրության հիմնական սկզբունքները, Երևան, 2014, էջ 50-51, նաև՝ էջ 28-29):

գրականագետ (այն է՝ *ի/ը*), *ջուր* - *ջրաբաժան*, *ջրահարս* (այն է՝ *ու/ը*), մյուս կողմից՝ *տեղակայում-տեղակայման*, *վերացարկում-վերացարկման*, *երևակում-երևակման* (որտեղ *ու/Յ* հերթագայությունը պատրաստի ձևով ժառանգվել է *-ում/ման* < գրբ. *-ումն/ման* ածանցական բաղադրիչի միջոցով) և այլն¹: Այսինքն՝ գրական արևելահայերենը գրաբարից (մասամբ էլ բարբառներից) «ոչ միայն փոփոխված ձևեր է ժառանգել, այլև հոլովման, հոգնակիի կազմության, բառակազմության պատրաստի կաղապարներ է վերցրել»², որոնք նորակազմությունների մեջ հանդես գալով՝ շեշտափոխական հնչյունափոխությունների կենդանի և գործուն լինելու թվացյալ տպավորություն են թողնում: Բացի այդ, կարծում ենք՝ շեշտափոխական հնչյունափոխությունների ընդհանուր կանոնից շեղվող բազմաթիվ անհնչյունափոխ ձևերը և զուգաձևությունները³ (որոնք ոչ այլ ինչ են, քան տվյալ ձևահնչյոթային հերթագայությունների գործառական ոլորտի սահմանափակման և համաբանական համահարթեցման արդյունք⁴) նույնպես վկայում են, որ այդ հնչյունափոխական օրենքը գրական լեզվում այլևս չի գործում, և որ երբեմնի զուտ հնչյունական պայմանավորվածություն ունեցող ձայնավորային հերթագայությունները, արդեն զգալիորեն քերականացված ու բառայնացված (այսինքն՝ ունենալով բառային, բառակազմական և քերականական որոշակի սահմանափակումներ, հմմտ. մի կողմից՝ *գիրք*, սեռ. *գրք-ի*, բայց *դիրք*, սեռ. *դիրք-ի*, մյուս կողմից՝ *արծիվ*, սեռ. *արծվ-ի*, բայց հոգ. *արծիվ-ներ* են), շարունակաբար ենթարկվում են համաբանական համահարթեցման ընթացիկ միտումի ազդեցությանը:

Ժամանակակից գրական արևելահայերենի շեշտափոխական ձայնավորային հերթագայությունների էությունը և գործառական առանձնահատկությունները լիովին հասկանալի են դառնում, երբ նկատի ենք առնում հայոց լեզվի պատմության և հայերենի բարբառների համապատասխան տվյալները: Արդ, նախ և առաջ կուզենայինք նշել, որ հայերենի շեշտափոխական հնչյունափոխությունների ենթադրյալ ծագումնային կապը հնդեվրոպական ձայնդարձի հետ⁵ մեզ անհամոզիչ է թվում և առարկություն է հարու-

¹ Տե՛ս **Մուրադյան Հ.**, նշվ. աշխ., էջ 84:

² **Առաքելյան Վ., Խաչատրյան Ա., Էլոյան Ս.**, նշվ. աշխ., էջ 129: Հմմտ. նաև **Զահուկյան Գ.**, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, 1974, էջ 94-95:

³ Հմմտ. **Մարգարյան Ա.**, նշվ. աշխ., էջ 90-113, **Առաքելյան Վ., Խաչատրյան Ա., Էլոյան Ս.**, նշվ. աշխ., էջ 129-144, **Ավետիսյան Յու., Թեյյան Լ., Մարգարյան Լ., Ավետիսյան Լ.**, Ուղեցույց հայոց լեզվի, գիրք Ա, Երևան, 2017, էջ 29-35, **Ավետիսյան Յու.**, Տեղաշարժեր ժամանակակից արևելահայերենի հնչյունափոխված և անհնչյունափոխ բաղադրական հիմքերում // «Վեմ», 2017, թիվ 1, էջ 132-145:

⁴ Հմմտ. **Աճառյան Հ.**, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 3, Երևան, 1957, էջ 883-884 և 896-898:

⁵ Տե՛ս **Զահուկյան Գ.**, Հին հայերենի հոլովման սիստեմը և նրա ծագումը, Երևան, 1959, էջ 201-205:

ցում¹: Իրականում շեշտափոխական ձայնավորային հերթագայությունները առաջացել են բուն հայերենի հոդի վրա՝ նախաշեշտ դիրքում որոշակի ձայնավորների ու երկբարբառների թուլացման/սղման և ամփոփման (կրճատման) հետևանքով ($h > p/\emptyset$, $m > p/\emptyset$, $t > h$, $nj > ml$, $kw > t$) և տիպաբանորեն համեմատելի են այլ լեզուներում հարակից վանկի ուժգնության շեշտի ազդեցությամբ տեղի ունեցող համանման երևույթների հետ²: Իրանական և հունա-ասորական փոխառությունների հիման վրա Հ. Հյուբշմանի սահմանած ժամանակագրության համաձայն՝ այդ հնչյունական օրենքը հայերենում արդեն ուժի մեջ է եղել սասանյան թագավորությունից առաջ՝ պարթևական ժամանակաշրջանում, մինչդեռ Հայաստանում քրիստոնեության ընդունման շրջանում այն այլևս չէր գործում (դադարել էր գործելուց)³: Բայց, ինչպես նկատում է Հ. Մուրադյանը, շեշտի ուժգնության հետագա աճի շնորհիվ շեշտանախորդ ձայնավորների թուլացման/սղման հնչյունական օրենքը միջին հայերենի շրջանում կրկին նոր թափ է ստանում: Ընդ որում՝ «եթե հին գրական հայերենի շեշտի ազդեցությամբ փոփոխության էին ենթարկվում միայն թույլ ձայնավորները (h , m), ապա այս դեպքում հնչյունափոխությունն ընդգրկում է նաև «ուժեղ» ձայնավորները (w , n , t)⁴: Մինևույն ժամանակ նա, ելնելով այն հանգամանքից, որ որոշ «բարբառներ բառաթեքման ժամանակ անփոփոխ են պահում ձայնավորները, այդ թվում նաև h -ն և m -ն», ենթադրում է, որ «միջին հայերենի ժամանակաշրջանում ոչ միայն m -ի, այլև մյուս ձայնավորների շեշտից հնչյունափոխվելու հատկությունը տիպական ու գործուն էր հայերենի ոչ բոլոր տարբերակների համար»⁵:

Սակայն, մեր կարծիքով, հայերենի բարբառային տվյալների համապարփակ քննությունը իրականում անառարկելիորեն ցույց է տալիս, որ մի շարք բարբառներում (այդ թվում՝ Հ. Մուրադյանի կողմից իբրև օրինակ վկայակոչվող Պուլսի բարբառում) բառաթեքման ժամանակ շեշտափոխական հնչյունափոխությունների բացակայության բուն պատճառը համաբանական համահարթեցումն է: Տվյալ դեպքում ոչ միայն h -ի և m -ի, այլև մանավանդ w ձայնավորի հնչյունափոխության մի շարք վերապրուկային մնացորդները⁶ որևէ կասկած չեն թողնում, որ միջին հայերենի շրջանից նոր թափ առած շեշտա-

¹ Տե՛ս **Ավետյան Ս.**, Հնդեվրոպական լեզուներում ձայնավորների հերթագայության հին և նոր շերտերի քննության փորձ // «ԲԵՇ», 2003, թիվ 1, էջ 118-122:

² Տե՛ս նույն տեղում, էջ 116, 121:

³ Հանգամանորեն տե՛ս **Hübschmann H.**, Zur Chronologie der armenischen Vocalgesetze // **Hübschmann H.**, Kleine Schriften zum Armenischen, Hildesheim - New York, 1976, էջ 335-378:

⁴ **Մուրադյան Հ.**, նշվ. աշխ., էջ 71:

⁵ Նույն տեղում, էջ 82:

⁶ Հմմտ. ականջ > անգաջ, սեռ. անգրջի, հոգ. անգրջներ, գալակ > գավագ, սեռ. գավգի, հոգ. գավրգներ և այլն (տե՛ս **Աճառյան Հ.**, Քննություն Պոլսահայ բարբառի, Երևան, 1941, էջ 100-102: Հմմտ. նաև *նույնի*՝ Քննություն Նոր-Նախիջեւանի (Խրիմի) բարբառի, Երևան, 1925, էջ 194-196, *նույնի*՝ Քննություն Մարաղայի բարբառի, Երևան, 1926, էջ 175-176):

փոխական ձայնավորային հերթագայությունները ժամանակին բնորոշ են եղել նաև այդ բարբառներին: Նկատենք, որ համաբանական համահարթեցման գործընթացը այս կամ այն չափով իրականացվել է նաև մյուս բարբառներում: Արդ, ըստ շեշտափոխական ձայնավորային հերթագայությունների պահպանման կամ համաբանական համահարթեցման աստիճանի՝ կարելի է առանձնացնել հիմնականում բարբառների երեք խումբ. **ա)** մի շարք բարբառներում հարացույցի ներսում (այն է՝ հոլովման և հոգնակիի ձևերում) համաբանական համահարթեցման գործընթացը գրեթե ավարտին է հասել. երբեմնի գործուն ձայնավորային հերթագայությունների վերապրուկային մնացորդները պահպանվել են միայն սակավաթիվ ձևերում: Սակայն վերջիններս նույնպես համահարթեցման միտում են ցուցաբերում, էթե հաշվի առնենք, որ հաճախ այդ մի խումբ հնչյունափոխված ձևերին զուգահեռ գործածվում են նաև դրանց անհնչյունափոխ տարբերակները, որոնց մի մասը նույնիսկ արդեն ընկալվում է որպես ավելի սովորական ու նախընտրելի, իսկ հնչյունափոխված ձևերը հետզհետե տեղի են տալիս՝ հատկապես երիտասարդ սերնդի խոսքում¹, **բ)** այլ բարբառներում համաբանական համահարթեցումը դեռ ինտենսիվ ընթացքի մեջ է, ուստի բառաթեքման ժամանակ զուգաձևությունը դրսևորվում է առավել մեծ չափով. ընդհանուր առմամբ, հնչյունափոխված և անհնչյունափոխ տարբերակները գրեթե հավասարապես գործածվում են թե՛ հոլովման և թե՛ հոգնակիի ձևերում: Իսկ մի շարք բառերի դեպքում գործածական է կա՛մ միայն հնչյունափոխված, կա՛մ միայն անհնչյունափոխ ձևը², **գ)** որոշ բարբառներում էլ համաբանական համահարթեցման գործընթացը դեռ սկզբնական կամ սաղմնային փուլում է, էթե նկատի ունենանք, որ շեշտափոխական ձայնավորային հերթագայությունները ընդհանուր առմամբ դեռ կանոնավոր գործում են (ըստ բարբառների հիմնականում կա՛մ *ի*, *ու*, կա՛մ *ի*, *ու*, *ա* ձայնավորների պարագայում) թե՛ հոլովման և թե՛ հոգնակիի կազմության ժամանակ (այդ թվում՝ օտար լեզուներից կատարված նոր փոխառություններում)³, բայց համաբանական համահարթեցման առաջին նշանները սակավաթիվ շեղումների տեսքով արդեն նկատելի են մի շարք դեպքերում⁴: Այսպես, թեև Լոռու խոսվածքում *ի* և *ու* ձայնավորները սովորաբար բառաթեքման ժամանակ կանոնավոր ենթարկվում են շեշտափոխական ձայնավո-

¹ Տե՛ս **Աճառեան Ն.**, Քննություն Նոր-Նախիջեւանի..., էջ 194-196: Հմմտ. նաև *նույնի՛* Քննություն Պոլսահայ..., էջ 100-102, *նույնի՛* Քննություն Մարաղայի..., էջ 175-176:

² Հմմտ. **Աճառյան Ն.**, Քննություն Համշենի բարբառի, Երևան, 1947, էջ 99-105, 79-85, *նույնի՛* Քննություն Ագուլիսի բարբառի, Երևան, 1935, էջ 216-221, **Սասարյան Ս.**, Ուրմիայի (Մոյի) բարբառը, Երևան, 1962, էջ 69-74, 83-84, **Աղայան Է.**, նշվ. աշխ., էջ 168-169:

³ Հմմտ. **Աճառեան Ն.**, Քննություն Նոր-Ջուղայի բարբառի, Երևան, 1940, էջ 198-205, *նույնի՛* Քննություն Առտիլի բարբառի, Երևան, 1953, էջ 142-146, **Բաղդասարյան-Թափալցյան Ս. Ն.**, Մշո բարբառը, Երևան, 1958, էջ 18-35, **Սասարյան Ս.**, Լոռու խոսվածքը, Երևան, 1968, էջ 103, 90-95, նաև **Աճառյան Ն.**, Քննություն Վանի բարբառի, Երևան, 1952, էջ 113-115, 130-141:

⁴ Հմմտ., օրինակ, **Աճառյան Ն.**, Քննություն Առտիլի..., էջ 146:

րային հերթագայության¹, բայց, մեր կարծիքով, որոշ փաստեր վկայում են, որ *ու* ձայնավորի հնչյունափոխությունը արդեն գործուն չէ և համաբանական համահարթեցման միտում է ցուցաբերում: Նկատենք, որ, ի տարբերություն *ի* ձայնավորի, որը թուլացման/սղման է ենթարկվում անխտիր բոլոր բառերում, այդ թվում՝ նորագույն փոխառություններում (հմմտ. *մանդարին*, սեռ. *մանդարրնի*, հոգ. *մանդարրնի*, *ապելսին* «նարինջ», սեռ. *ապելսրնի*, հոգ. *ապելսրննի*, *արխիվ*, սեռ. *արխըվի*, հոգ. *արխըվնի*, *գրիպ*, սեռ. *գրըպի*, *թենիս*, սեռ. *թենըսի* և այլն), *ու* ձայնավորը մնում է անփոփոխ ոչ միայն նորագույն փոխառություններում (հմմտ. *աֆտորուս*, սեռ. *աֆտորուսի*, հոգ. *աֆտորուսնի*, *վիռուս/վիրուս* (< *վիրուս*), սեռ. *վիրուսի/վիրուսի*, հոգ. *վիրուսնի/վիրուսնի* են), այլև բարբառային մի խումբ բառերի դեպքում. հմմտ. մի կողմից *աշունք* (< *աշուն*), սեռ. *աշունքվա*, *թիզունք* (< *թիկունք*), սեռ. *թիզունքի*, բաց. *թիզունքիցը*, *ըտասունք* (< *արտասուք*), սեռ. *ըտասունքի*, հոգ. *ըտասունքնի* (բայց դրանց կողքին ունենք նաև՝ *փըշրունք* «փշուր», սեռ. *փըշրընքի*, հոգ. *փըշրընքնի*՝ երբեմնի օրինաչափ *ու/ը* հերթագայությամբ), մյուս կողմից՝ *քըռդինք* (< *քըտինք*), սեռ. *քըռդընքի*, *շըլինք* «վիզ», սեռ. *շըլընքի*, հոգ. *շըլընքնի*, *բաժինք* «օժիտ», սեռ. *բաժընքի*, հոգ. *բաժընքնի* ևն (որտեղ գրեթե նույնպիսի հնչյունաշարակարգային կառուցվածքի դեպքում *ի/ը* հերթագայությունը՝² կանոնավոր գործում է):

Արդ, եթե փորձենք բերված բարբառային տվյալների լույսի ներքո բնութագրել գրական արևելահայերենի շեշտափոխական հնչյունափոխությունների ներկայիս վիճակը, ապա հաշվի առնելով ընդհանուր կանոնից շեղվող մեծաթիվ անհնչյունափոխ ձևերը և զուգաձևությունները³՝ կարող ենք ասել, որ այստեղ ևս համաբանական համահարթեցումը դեռ ինտենսիվ ընթացքի մեջ է: Բնականաբար ընթացիկ համաբանական-ձևաբանական փոփոխությունների այս անցումային փուլից անխուսափելիորեն բխող բազմաթիվ զուգաձևերի և շեղումների առկայության պարագայում հնարավոր չէ համընդհանուր և հստակ օրինաչափություններ սահմանել, թե ո՞ր բառերն են ենթարկվում շեշտափոխական ձայնավորային հերթագայության և որոնք՝ ոչ: Ուստի հնչյունափոխության տեսանկյունից կանոնիկ կամ ավելի նախընտրելի համարվող ձևերը և տարբերակները հաճախ տրվում են բառացանկերի տեսքով⁴: Այդուհանդերձ հետազոտողները նաև նշում են

¹ Տե՛ս Ասատրյան Մ., Լոռու խոսվածքը..., էջ 103, 90-95:

² Մ. Ասատրյանը Լոռու խոսվածքը դիտարկելիս այս երևույթին չի անդրադառնում: Մենք՝ իբրև այդ խոսվածքի կրող, տվյալ դեպքում հենվում ենք հայրենի խոսվածքի մեր անձնական իմացության վրա:

³ Հմմտ. Մարգարյան Ա., նշվ. աշխ., էջ 90-113, Առաքելյան Վ., Խաչատրյան Ա., Էդոյան Մ., նշվ. աշխ., էջ 129-144, Ավետիսյան Յու., Թեյյան Լ., Մարգարյան Լ., Ավետիսյան Լ., նշվ. աշխ., էջ 29-35, Ավետիսյան Յու., նշվ. աշխ., էջ 132-145:

⁴ Հմմտ., օրինակ՝ Ավետիսյան Յու., Թեյյան Լ., Մարգարյան Լ., Ավետիսյան Լ., նշվ. աշխ., էջ 29-35:

հնչյունափոխված և անհնչյունափոխ ձևերի ընտրությունը և գործածականությունը պայմանավորող մի շարք գործոններ: Այսպես, նկատված է, որ ինչպես գրական լեզվում, այնպես էլ բարբառներում ձայնավորների շեշտափոխական հնչյունափոխությունը հաճախ տեղի չի ունենում անսովոր, քիչ գործածական բառերում, իսկ համեմատաբար հաճախագործածականների դեպքում այն ավելի հետևողականորեն է գործում: Բայց սովորաբար չի բացատրվում, թե հաճախագործածությունը հատկապես ինչու և ինչպես է ազդում ձայնավորների տղման երևույթի վրա¹: Մյուս կողմից, «**Ձևակազմական և բառակազմական հիմքերից հնչյունափոխության մեջ առավել մեծ ակտիվություն են դրսևորում և տարբերակային ձևեր են կազմում երկրորդները բառակազմական հիմքերը**»² ձևակերպումը այնպիսի տպավորություն է թողնում, կարծես թե տվյալ դեպքում գործ ունենք ընթացիկ հնչյունափոխության (այն է՝ կենդանի ու գործուն հնչյունափոխական երևույթի) հետ: Սակայն, եթե հաշվի առնենք, որ «Որպես կանոն՝ և՛ ձևակազմության, և՛ բառակազմության մեջ հնչյունափոխության չեն ենթարկվում օտար բառերը (այն է՝ նորագույն փոխառությունները – *Մ. Ա.*)...»³, և որ «Բաղադրական հիմքերում ընդհանուր միտումը անհնչյունափոխ տարբերակների աստիճանական տարածումն է»⁴, այդ պարագայում, ինչպես արդեն նշել ենք, չի կարող խոսք լինել կենդանի ու գործուն հնչյունափոխության մասին: Հետևաբար ոչ թե բառակազմական հիմքերը հնչյունափոխության մեջ առավել մեծ ակտիվություն են դրսևորում և տարբերակային ձևեր են կազմում, այլ իրականում բառակազմական հիմքերը համեմատաբար դժվարությամբ են ենթարկվում համաբանական համահարթեցման ընթացիկ միտումի ազդեցությանը, ուստի ավելի հարազատորեն են պահում երբեմնի գործուն ձայնավորային հերթագայությունների սկզբնական դրությունը: Մինչդեռ բառաթեքման ժամանակ համաբանական համահարթեցման գործընթացն իրականացվում է ավելի ինտենսիվորեն, քանի որ հարացույցի անդամների միջև իմաստային փոխհարաբերությունն ավելի սերտ է: Նկատենք նաև, որ տվյալ դեպքում համահարթեցումը կատարվում է առավել գործածական ձևի՝ եզակի ուղղական-հայցականի հենքի վրա, այսինքն՝ վերջինիս անհնչյունափոխ ձևահնչյոթային տարբերակը ընդհանրանում է ողջ հարացույցի ներսում:

Իհարկե լեզվական միավորների կիրառահաճախականությունը ավելի

¹ Տե՛ս օրինակ՝ **Աճառյան Հ.**, Քննություն Վանի..., էջ 134, *նույնի՝* Քննություն Համշենի..., էջ 100, 102, *նույնի՝* Լիակատար քերական..., էջ 919, **Ավետիսյան Յու.**, **Թեյյան Լ.**, **Սարգսյան Լ.**, **Ավետիսյան Լ.**, նշվ. աշխ., էջ 24, **Ավետիսյան Յու.**, նշվ. աշխ., էջ 132, նաև՝ **Առաքելյան Վ.**, Ժամանակակից հայերենի հնչյունաբանություն, Երևան, 1955, էջ 79:

² **Ավետիսյան Յու.**, նշվ. աշխ., էջ 138: Հմմտ նաև **Ավետիսյան Յու.**, **Թեյյան Լ.**, **Սարգսյան Լ.**, **Ավետիսյան Լ.**, նշվ. աշխ., էջ 25:

³ **Ավետիսյան Յու.**, **Թեյյան Լ.**, **Սարգսյան Լ.**, **Ավետիսյան Լ.**, նշվ. աշխ., էջ 25: Տե՛ս նաև **Ավետիսյան Յու.**, նշվ. աշխ., էջ 144-145:

⁴ **Ավետիսյան Յու.**, **Թեյյան Լ.**, **Սարգսյան Լ.**, **Ավետիսյան Լ.**, նշվ. աշխ., էջ 25:

վճռորոշ դեր է խաղում հնչյունափոխված և անհնչյունափոխ ձևերի ընտրության հարցում, քան իմաստային մերձավորության աստիճանը: Ուստի ձևա-հնչույթային հերթագայությունները ընդհանուր առմամբ լավ պահպանվել են համեմատաբար բարձր կիրառահաճախականություն ունեցող բառերի ձևաբանական հարացույցում, իսկ գուգաձևերի առկայության դեպքում հնչյունափոխված ձևերը (տարբերակները) արդի լեզվագագացողությամբ դեռևս ընկալվում են որպես ավելի նախընտրելի ու կանոնիկ, մինչդեռ ցածր կիրառահաճախականություն ունեցող բառերի ուղիղ ձևին բնորոշ ձևա-հնչույթային տարբերակը (այն է՝ անհնչյունափոխ բառահիմքը) համաբանությամբ ընդհանրացել է հարացույցի ներսում կամ էլ, եթե նույնիսկ գուգա-ձևության փուլը դեռ լիովին չի հաղթահարվել, համենայն դեպս անհնչյունափոխ տարբերակը արդեն ընկալվում է որպես ավելի նախընտրելի ու կանոնիկ: Ի դեպ, «Արևակ (այն է՝ Արևելահայերենի ազգային կորպուս)»-ի տվյալների հիման վրա մի խումբ բառերի հնչյունափոխված և անհնչյունափոխ տարբերակների գործածականության՝ Յու. Ավետիսյանի կազմած վիճակագրական աղյուսակները հաստատում են մեր վերոհիշյալ տեսակետը: Թեև տվյալ դեպքում նրա նպատակն է եղել պարզել ոչ թե լեզվական միավորների (բառերի) ընդհանուր կիրառահաճախականությունը, այլ նրանց հնչյունափոխված և անհնչյունափոխ տարբերակների հարաբերական գործածականությունը¹, այդուհանդերձ այդ գուգաձևերի գործածությունների ընդհանուր քանակը միաժամանակ թույլ է տալիս պատկերացում կազմել նաև տվյալ բառերի ընդհանուր կիրառահաճախականության մասին: Արդ, բավական բարձր կիրառահաճախականություն ունեցող *բաժին*, *ծաղիկ*, *երգիչ*, *արծիվ*, *խնդիր*, *մարմին*, *նկարիչ* ևն բառերի դեպքում անհամեմատ ավելի գործածական, հետևաբար առավել նախընտրելի և կանոնիկ են հնչյունափոխված *բաժնի*, *ծաղկի*, *երգչի*, *արծվի*, *խնդրի*, *մարմնի* *նկարչի* ևն ձևերը, իսկ համեմատաբար ցածր կիրառահաճախականություն ունեցող *անուրջ*, *բռունցք*, *կտուց*, *մուրճ*, *ոջիլ* ևն բառերի պարագայում հանձնարարելի և կանոնիկ են անհնչյունափոխ *անուրջի*, *բռունցքի*, *կտուցի*, *մուրճի*, *ոջիլի* ևն տարբերակները²: Անշուշտ, «Արևակ»-ի ընձեռած վիճակագրական տվյալներից պետք է օգտվել մեծ զգուշավորությամբ և վերապահումով՝ հաշվի առնելով, որ նրանում տարբերակված և սահմանազատված չեն, մի կողմից, քերականական և բառաքերականական համանունները, մյուս կողմից՝ արևելահայերենի ժամանակագրական տարբեր շերտերի երևույթները: Այնինչ, մեր կարծիքով, հնչյունափոխված և անհնչյունափոխ տարբերակների վիճակագրական հաշվումների ժամանակ առանց ժամանակագրական գործոնը հաշվի առնելու հնարավոր չէ ճիշտ կերպով որոշել, թե որ տարբե-

¹ Տե՛ս **Ավետիսյան Յու.**, նշվ. աշխ., էջ 137-138-ի վիճակագրական աղյուսակները:

² Բերված ձևերի և դրանց գործածականության վերաբերյալ տե՛ս նույն տեղում:

բակներն են գրական արևելահայերենի ներկա փուլում առավել գործածական և, ըստ այդմ, հանձնարարելի ու կանոնիկ: Այսպես, թեև *տեսուչ* և *ավիշ* բառերի հնչյունափոխված *տեսչի* (282)¹ և *ավշի* (53) ձևերը ընդհանուր գործածականությամբ գերազանցում են անհնչյունափոխ *տեսուչի* (235) և *ավիշի* (33) տարբերակներին, բայց շատ ավելի կարևոր է այն, որ ժամանակագրորեն համեմատաբար նոր շրջանի տեքստերում առավել հաճախադեպ են անհնչյունափոխ ձևերը: Իսկ հնչյունափոխված տարբերակների գործածության դեպքերի գերակշիռ մասը պատկանում է ավելի վաղ շրջանի տեքստերին²: Եվ հատկանշական է, որ «Ուղեցույց»-ի հեղինակները տվյալ դեպքում միանգամայն իրավացիորեն (թերևս, առաջնորդվելով արդի լեզվագագացողությամբ) որպես եզակի սեռականի հանձնարարելի, կանոնիկ ձև նշում են անհնչյունափոխ *տեսուչի* և *ավիշի* տարբերակները³: Նմանապես, անշուշտ, արդի լեզվագագացողության հիման վրա *շապիկ* բառի եզ. սեռ. *շապիկի/շապկի* գուգաձևերից որպես հանձնարարելի և կանոնիկ է դիտվում անհնչյունափոխ *շապիկի* տարբերակը⁴, թեև, ըստ «Արևակ»-ի տվյալների, հնչյունափոխված *շապկի* ձևի գործածականությունը ավելի մեծ է՝ *շապիկի* (325), *շապկի* (347):

Սակայն արդի լեզվագագացողության սկզբունքը «Ուղեցույց»-ում ոչ միշտ է հետևողականորեն պահպանված: Այսպես, *գրիչ* բառի *գրչի/գրիչի* գուգաձևերից հանձնարարելի ու կանոնիկ է համարվում հնչյունափոխված *գրչի* տարբերակը⁵: Նկատենք նաև, որ վերջինիս գործածականությունը, ըստ «Արևակ»-ի, անհամեմատ բարձր է անհնչյունափոխ *գրիչի* ձևի նկատմամբ: Այդուհանդերձ, եթե մի կողմ թողնենք «Արևակ»-ում *գրիչ* բառի «մատենագիր ձեռագրերն արտագրող» իմաստով կիրառությունները, ապա հատկապես վերջին մի քանի տասնամյակներին պատկանող տեքստերում բուն «գրելու գործիք» իմաստով հիմնականում անհնչյունափոխ *գրիչի* ձևն է գործածվում ազատ, ոչ կայուն համատեքստում: Իսկ հնչյունափոխված *գրչի* տարբերակը մեծ մասամբ հանդես է գալիս կայուն, քարացած արտահայտություններում և փոխաբերական իմաստով, ինչպես՝ *գրչի հարվածով*, *գրչի մարդ*, *նույն հեղինակի գրչի արգասիք է*, *նրա գրչին է պատկանում* ևն: Արդի լեզվագագացողությունը նույնպես հուշում է, որ ազատ, ոչ կայուն համատեքստում հիմնականում գործածական է անհնչյունափոխ *գրիչի* ձևը. հմմտ. *Այս մատիտը*

¹ Այս և հետագա շարադրանքում փակագծում նշվող թվանշանները ցույց են տալիս բերվող ձևերի գործածականությունը՝ ըստ «Արևակ»-ի վիճակագրական տվյալների (տե՛ս ԱՐԵՎԱԿ, էլեկտրոնային հղում՝ http://eanc.net/EANC/search/?interface_language=am):

² Հմմտ. նույն տեղում:

³ Տե՛ս **Ավետիսյան Յու., Թեյան Լ., Սարգսյան Լ., Ավետիսյան Լ.**, նշվ. աշխ., էջ 29, 32: Նկատենք, որ «Ուղեցույց»-ի «ցանկում տրված գուգաձևերից հանձնարարելի են առաջին տարբերակները» (նույն տեղում, էջ 28):

⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 32:

⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 29:

դի՛ր քո գրիչի կողքին, Նրա գրիչի գույնը կապույտ է, Այդ կորած գրիչի համար մի՛ անհանգստացիր նն: Մինչդեռ նույն համատեքստում հնչունափոխված գրչի տարբերակը արդի լեզվագագացողությամբ բավական խորթ է հնչում: Այդպես է նաև բացառական և գործիական հոլովաձևերի դեպքում: Հետևաբար կարծում ենք՝ գրական արևելահայերենի ներկա փուլում իբրև հանձնարարելի և կանոնիկ պետք է դիտել անհնչունափոխ գրիչի ձևը: Ասվածից հետևում է նաև, որ արդի գրական լեզվում այս կամ այն բառի հնչունափոխված և անհնչունափոխ տարբերակներից առավել գործածական և, ըստ այդմ, հանձնարարելի ու կանոնիկ ձևը պարզելիս պետք է նկատի ունենալ հնարավորինս վերջին շրջանի տեքստերը և տվյալ ձևերի գործածությունը միայն ազատ, ոչ կայուն համատեքստում, քանի որ ինտենսիվ համաբանական համահարթեցման ընթացիկ միտումի պարագայում հնչունափոխված և անհնչունափոխ տարբերակների գործածականության հարաբերակցությունը նույնիսկ 5-10 տարվա ժամանակային կտրվածքում կարող է զգալիորեն փոխվել:

Իհարկե բառաթեքման ժամանակ *ի* և *ու* ձայնավորները անփոփոխ պահող ոչ բոլոր բառերն են համաբանական համահարթեցման ենթարկվել, այլ դրանց մի մասը գրաբարից կատարված գրական փոխառություններ կամ արդի գրական լեզվի նորակազմություններ են, որոնք գրական արևելահայերենում երբեք շեշտափոխական ձայնավորային հերթագայություն չեն դրսևորել (հմմտ. *աճուրդ* – *աճուրդի* նն): Սակայն անհամեմատ ավելի շատ են համաբանական համահարթեցման դեպքերը, և առկա բազմաթիվ գուգաձևությունները դրա վառ ապացույցն են: Այդ առումով հատկանշական է, որ նույնիսկ բավական բարձր կիրառահաճախականություն ունեցող բառերը արդեն մեծ մասամբ գուգաձևություն են հանդես բերում, թեև վերջիններիս պարագայում անհնչունափոխ տարբերակները արդի լեզվագագացողությամբ դեռևս ընկալվում են որպես ոչ հանձնարարելի (ոչ կանոնիկ) ձևեր¹: Բայց կարծում ենք՝ դա ընդամենը ժամանակի հարց է, քանի որ, ինչպես վերը տեսանք, արդի գրական լեզվում ընդհանուր միտումը անհնչունափոխ ձևերի աստիճանական տարածումն է (իհարկե, էթե հետագայում նորից շեշտի ուժգնության աճ տեղի չունենա և նոր թափ չհաղորդի շեշտափոխական հնչունափոխություններին):

Անշուշտ արդի գրական արևելահայերենում որոշ դեպքերում էլ անհնչունափոխ տարբերակների ընտրությունը զգալիորեն պայմանավորված է եղել բաղաձայնների խճողումից և անբարեհունչ արտասանությունից խու-

¹ Հմմտ. Ավետիսյան Յու., Թեյյան Լ., Սարգսյան Լ., Ավետիսյան Լ., նշվ. աշխ., էջ 29-33-ի բառացանկը:

սափելու միտումով, որը, ի դեպ, նկատելի է նաև մի շարք բարբառներում¹: Այդուհանդերձ կարծում ենք՝ նշված միտումը ոչ թե առանցքային, այլ օժանդակ դեր է խաղացել արդի գրական լեզվում հնչյունափոխված և անհնչյունափոխ տարբերակների ընտրությունը և գործածականությունը պայմանավորելու հարցում: Իսկ, ասենք, *անուրջի*, *խորտիկի* ձևերի դեպքում մեզ անհամոզիչ է թվում այն տեսակետը, ըստ որի՝ «Բարեհունչ են՝ *անուրջի*, *խորտիկի*...», և հակառակը. դժվար են արտասանվում և անբարեհունչ են՝ *անրջի*, *խորտկի*...»²: Նկատենք, որ գրեթե նույնպիսի կամ համանման հնչյունաշարակարգային կառուցվածք և բաղաձայնների կուտակում ունեցող հնչյունափոխված *կամրջի* և *կարկտի* ձևերը «Ուղեցույց»-ում դիտվում են իբրև հանձնարարելի և ավելի նախընտրելի, քան դրանց անհնչյունափոխ *կամուրջի* և *կարկուտի* տարբերակները³: Հետևաբար կարծում ենք՝ ճիշտ չէր լինի անհնչյունափոխ *անուրջի* և *խորտիկի* ձևերի ընտրության հարցում անբարեհունչ արտասանությունից խուսափելու միտում փնտրել: Մեզ ավելի հավանական է թվում, որ սովյալ դեպքում հնչյունափոխված և անհնչյունափոխ ձևերի ընտրությունը պայմանավորող հիմնական գործոնը կիրառահաճախականությունն է. հմմտ. *անուրջի* (45), *անրջի* (2) և *կամրջի* (1533), *կամուրջի* (922)⁴: Ըստ այդմ՝ ցածր կիրառահաճախականություն ունեցող *անուրջ* բառի հնչյունափոխված *անրջի* ձևը համաբանական համահարթեցման գործընթացում հեշտությամբ իր տեղը զիջել է անհնչյունափոխ *անուրջի* տարբերակին, մինչդեռ բավական բարձր կիրառահաճախականություն ունեցող *կամուրջ* բառի հնչյունափոխված *կամրջի* ձևը դեռևս պահպանում է հանձնարարելի և կանոնիկ տարբերակի կարգավիճակը:

Այսպիսով՝ ամփոփելով վերը կատարված քննության արդյունքները՝ կարող ենք ասել հետևյալը: Շեշտափոխական ձայնավորային հերթագայությունները արդի գրական արևելահայերենում այլևս գործուն օրինաչափություններ չեն, այլ ավանդական բնույթ են կրում և, որպես արդեն զգալիորեն քերականացված և բառայնացված ձևահնչույթային հերթագայություններ՝ շարունակաբար ենթարկվում են համաբանական համահարթեցման ընթացիկ միտումի ազդեցությանը՝ անխուսափելիորեն անցնելով զուգաձևության ինտենսիվ փուլ: Ընդ որում՝ հնչյունափոխված և անհնչյունափոխ տարբերակների ընտրությունը և գործածությունը պայմանավորող գործոնների շարքում կիրառահաճախականությունը առանցքային դեր է խաղում: Իսկ մնացած գործոնները, այդ թվում՝ բաղաձայնների կուտակումից և անբարե-

¹ Տե՛ս **Աճառյան Հ.**, Լիակատար քերական., հ. 3, էջ 888, *նույնի՝* Քննություն Համշենի..., էջ 100, նաև՝ **Աղայան Է.**, նշվ. աշխ., էջ 169, **Ավետիսյան Յու.**, նշվ. աշխ., էջ 143-144, **Առաքելյան Վ.**, նշվ. աշխ., էջ 90:

² **Ավետիսյան Յու., Թեյյան Լ., Սարգսյան Լ., Ավետիսյան Լ.**, նշվ. աշխ., էջ 24:

³ Տե՛ս նույն տեղում, էջ 30:

⁴ Հմմտ. **Ավետիսյան Յու.**, նշվ. աշխ., էջ 137-138-ի վիճակագրական աղյուսակները:

հունչ արտասանությունից խուսափելու միտումը, համեմատաբար ավելի սահմանափակ և օժանդակ դեր ունեն համաբանական համահարթեցման տվյալ գործընթացում:

Саргис Аветян – *Чередования гласных, обусловленные перемещением ударения, в современном восточноармянском языке (синхроническое и диахроническое рассмотрение)*

Статья посвящена синхроническому и диахроническому рассмотрению чередований гласных, которые в грамматиках и учебниках по современному восточноармянскому языку обычно упоминаются как звуковые изменения, обусловленные перемещением ударения. Несмотря на то, что эти чередования возникли в результате регулярного фонетического изменения, а именно редукции и/или отпадания определенных гласных и дифтонгов в предударном слоге, сейчас они не являются продуктивной фонологической закономерностью, будучи уже лексикализованными и морфологизованными в большей или меньшей степени. С другой стороны, происходит интенсивное аналогическое выравнивание, чем объясняется наличие многочисленных редуцированных и нередуцированных дублетов. И, разумеется, частотность употребления играет очень важную и определяющую роль при выборе вариантов: оригинальные чередования сохранены сравнительно хорошо, и редуцированные варианты пока являются предпочтительными и принятыми нормой литературного языка в широкоупотребительных словах. Наоборот, в сравнительно низкоупотребительных словах чередования почти исчезли, и нередуцированный вариант обобщился по всей парадигме, или, если период вариации еще продолжается, нередуцированный вариант уже воспринимается как более предпочтительный с точки зрения литературной нормы.

Sargis Avetyan – *The Accent-Shift-Conditioned Vowel Alternations in Modern Eastern Armenian (a Synchronic and Diachronic Examination)*

The article is devoted to the synchronic and diachronic examination of the vowel alternations which are commonly referred to as accent-shift-conditioned sound changes in grammars and textbooks of Modern Eastern Armenian. Although these alternations all had their source in regular sound change, namely, the reduction and/or loss of certain vowels and diphthongs in pretonic syllable, now they are no longer a productive phonological pattern in the modern literary language, having already become lexicalized and morphologized to a more or less extent. On the other hand, analogical leveling is occurring intensively, which accounts for the abundance of reduced and non-reduced doublets. And as expected, the frequency of use with its preserving effect, has a pivotal role in determining the choice of the variants: the original alternations are retained relatively well and the reduced variants are still more preferable and accepted in the literary language in the case of high-frequency words. In contrast, with relatively low-frequency words the alternations are almost lost, with the non-reduced variant having been generalized throughout the paradigm, or, if the variation stage still persists, the non-reduced variant is already conceived of as more preferable and standard in the literary language.

Ներկայացվել է 05.02.2020

Գրախոսվել է 03.02.2020

Ընդունվել է տպագրության 30.06.2020